ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	***Վանաձոր համայնքի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի և «Վանաձորի Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոց ԿՈՒՀ» ՀՈԱԿի շենքերի հիմնանորոգում***
Մարզ	*Լոռի*
Համայնքը /համայնքները	*Վանաձոր* *Գուգարք* *Շահումյան* *Դարպաս*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*120* կմ, 0 կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Համայնքի՝ 87 266 մարդ, Վանաձոր 77200 մարդ
Սահմանամերձ համայնք/բնակավայր	-
Բարձր լեռնային համայնք /բնակավայր	-
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Այո 2014թ,
Համայնքի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ **- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,** **- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,**	*Լոռու մարզկենտրոն Վանաձորը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում: Զբաղեցնում է 2599.33 հեկտար մակերես: Վանաձորը տարածքային վարչական կենտրոն է: Խոշորացումից հետո միացվել են Գուգարք, Շահումյան և Դարպաս բնակավայրերը* ➢ *Համայնքի բնակիչների 73,5% ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, շուրջ 90% ունի կենտրոնացված կոյուղու համակարգ:* ➢ *Գազամատակարարմամբ ապահովված է բնակչության շուրջ 98%::*

- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, **- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ**	➢ *Գիշերային լուսավորվածությամբ փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմում է 82%, լուսավորված փողոցների ընդհանուր երկարությունը 105 կմ է: Լուսատուների միայն 4% է LED լուսատուներ:*
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Ծրագրով նախատեսվում է 1.***Հիմնանորոգել Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատը*** ***2.Վերանորոգել Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոցը*** **1. Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատը**, դա Վանաձորի այցեքարտն է: Այն կառուցվել է 1950 -ական թվականներին և եղել է քիմգործարանի մշակույթի տունը: 1988թ ավերիչ երկրաշարժից հետո, այն դարձավ վթարային, մասնակի քանդված: 2006-2007թթ մշակույթի պալատը վերականգնվեց, կրկին դառնալով վանաձորցիների սիրելի վայրերից մեկը: Ներկայումս գործում է կամերային նվագախումբը, երգչախումբ, Բոհեմ թատրոնը, Հորովել երգի պարի անսամբլը: Շենքում տեղակայված են մի շարք հասարակական կազմակերպություններ և այլն: Կազմակերպվում են մեծ միջոցառումներ, քանի որ քաղաքի ամենամեծ դահլիճը հենց մշակության պալատում է Սակայն տարիների ընթացքում շենքի վիճակը գնալով վատթարացավ: Հիմնական խնդիրը կապված է տանիքի հետ՝ իսկ ավելի կոնկրետ տանիքի թիթեղների ժանգոտվածության, հրատապորեն անհրաժեշտ է նորոգել կոյուղին փոխել ջեռուցման համակարգը, պատուհանները, իրականացնել էներգաարդյունավետ միջոցառումներ, կատարել կոսմետիկ վերանորոգում: Մշակույթի պալատում պատշաճ լուսավորության բացակայության պատճառով առաջանում են բեմական խնդիրներ : Այս խնդիրները իրենցից ենթադրում են հրատապ վերականգնման անհրաժեշտություն: 2. ***Գր. Հախինյանի անվան երաժշտական դպրոցը*** /Ներսիսյան 13/ Վանաձորի Գր Հախինյանի անվան երաժշտակա դպրոցը քաղաքում գործող դպրոցներից միակն է, որն աշխատում է անբարեկարգ պայմաններում: Դպրոցը հիմնադրվել է 1973թ.: Գտնվում է ոչ կենտրոնական թաղամասում, տվյալ թաղամասի միակ երաժշտական դպրոցն է:

	Երաժշտական դպրոցը գործում է հինգ հարկանի շենքի առաջին հարկում (շենքի բացվածք), զբաղեցնում է 350քմ տարածք: Հիմնադրման օրվանից չի վերանորոգվել, կատարվել է մասնակի վերանորոգում: Սանհանգույցը գտնվում է վթարային վիճակում, կոսմետիկ վերանորոգման կարիք ունեն և՛ դասասենյակները, և՛ դահլիճը: Դպրոցում գործում են դաշնամուրի, ջութակի, դուդուկի, երգեցողության, կլառնետի, կիթառի, քանոնի բաժիններ: Աշակերտների թիվը՝ 92: Աշխատակիցներ՝ 20:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	*Համայնքի զարգացման ծրագրով նախատեսվում է մշակութային օջախների հիմնորոգումը: Տվյալ ծրագրի իրականացումն ունի երկարաժամկետ բնույթ, որն իր ազդեցությունը կունենա համայնքի բնակիչների և այցելուների վրա:* ***Շառլ Ազնավուրի մշակույթի տան և Գր.Հախինյանի անվան երաժշտական դպրոցի շենքերի հիմնանորոգումը*** *կնպաստի համայնքի, ինչպես նաև մարզի մատաղ սերնդի դաստիարակությանը, կրթությանը, էսթետիկ զարգացմանը: Արդյունքում կունենանք՝* *1.Հիմնանորոգված մշակույթի տուն և երաժշտական դպրոց* *2.Ժամանակակից արտաքին տեսք* *3. Հաճախելիության ավելացում* *4. նոր միջոցառումներ* *5. կբացվեն նոր խմբակներ, երաժշտական դասարաններ* *6. կլուծվի երեխաների և պատանիների զբաղվածության հարցը* *7 Շ.Ազնավուրի մշակույթի պալատը կվերականգնի երբեմնի համբավը, դառնալով քաղաքի այցեքարտը* *8. Կկազմակերպվեն կինոդիտումներ, մշակութային և ժամանցային միջոցառումներ* *կբացվեն նոր աշխատատեղեր, կավելանա շահառուների թիվը,* *Կսպասարկի ինչպես խոշորացված համայնքին, այնպես էլ ամբողջ մարզնի:* *Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք հիմնանորոգված ,* ***սեյսմակայուն****, էներգաարդյունավետ ժամանակակից մշակույթի տուն:* ***«Շառլ Ազնավուրի մշակույթի պալատի հիմնանորոգումը»*** *կնպաստի համայնքի բնակչության համար ժամանակակից պայմաններով մշակույթի տան ստեղծմանը, նրանց դաստիարակությանը, կրթությանը, էսթետիկ զարգացմանը:* *Արդյունքում կունենանք՝* *1.Հիմնանորոգված տանիք*

	2. կոյուղու նոր համակարգ 3. էներգաարդյունավետ պատուհաններ 4. բարեկարգ շենքային պայմաններ 5. ջեռուցման նոր համակարգ «Գր.Հախինյանի» անվան երաժշտական դպրոցի հիմնանորոգումը կնպաստի մատաղ սերնդի դաստիարակությանը, կրթությանը, երեխաների զբաղվածության խնդրի լուծմանը: Արդյունքում կունենաք 1Հիմնանորոգված հատակներ 2. նորոգված սանհանգույց, նոր կոյուղագծով 3.լուսավորության փոխարինում էներգաարդյունավետ լամպերով 4. հարդարման աշխատանքներ կբացվեն նոր աշխատատեղեր, հնարավորություն կստեղծվի զարգացնելու մշակութային կյանքը, կազմակերպելու մի շարք հանրապետական և միջազգային միջոցառումներ,
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Շ.Ազնավուրի մշակույթի պալատի հիմնանորոգման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները: Ծրագրի արդյունքին հասնելու գործողությունների պլան 1. Նախագծա-նախահաշվային աշխատանքներ 2. մրցույթի հայտարարում /30 -45օր/ 3. արդյունքների ամփոփում/ մինչև 30օր/ 4. Շին աշխատանքների մեկնարկ 5. Մշտադիտարկում /ծրագրի ընթացքում/ 1. Ջերմամեկուսացված, հիմնանորոգված տանիք 2000քմ 2. Նոր կոյուղագիծ -150գծմ 3. Ջեռուցման նոր համակարգ 4. Էներգաարդյունավետ պատուհաններ 400քմ 5. Վերանորոգված սենյակներ և դահլիճ Գր.Հախինյանի անվան երաժշտական դպրոց հիմնանորոգման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ գործողությունները: Ծրագրի արդյունքին հասնելու գործողությունների պլան 1. Նախագծա-նախահաշվային աշխատանքներ 2. մրցույթի հայտարարում /30 -45օր/ 3. արդյունքների ամփոփում/ մինչև 30օր/ 4. Շին աշխատանքների մեկնարկ 5. 5. Մշտադիտարկում /ծրագրի ընթացքում/ Արդյունքում կունենանք 300քմ տարածքով հիմնանորոգված երաժշտական դպրոց 1. Նոր սանհանգույց 2. Փոխարինված հատակներ 3. Վերանորոգված դասասենյակներ 4. Էներգաարդյունավետ լուսավորություն

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	*Նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի իրականացման արդյունքում կբարձրանա համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների կադաստրային արժեքը 260 մլն դրամով :*
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	*1.Շ.Ազնավուրի մշակույթի պալատի հիմնանորոգում ծրագրի շահառուները կլինեն Վանաձոր համայնքի և Լոռու մարզի բնակիչները, այցելուները, զբոսաշրջիկները* *2.Կփոխվի հարմարավետության չափը 100%-ով* *3. Ծրագրի ավարտից հետո կավելանա միջոցառումների, համերգների և այլ ժամանցային միջոցառումների թիվը* *4.Կնպաստի տուրիզմի զարգացմանը* *5. Խթան կհանդիսանա մշակութային կյանքի զարգացմանը* *Գր.Հախինյանի երաժշտական դպրոցի հիմնանորոգում ծրագրի շահառուները կլինեն 6-18 տարեկան երեխաները, կբացվեն նոր դասարաններ, կլուծվի երեխաների երաժշտական դաստիարակության և զբաղվածության հարցը:* *Շահառուների թիվը կդառնա 150: Կբացվեն նոր աշխատատեղեր*
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	*Հիմնանորոգման աշխատանքների ընթացքում նախատեսվում է 55 ժամանակավոր աշխատատեղ, իսկ ծրագրի իրականացման արդյունքում՝* ***երաժշտական դպրոցում 20 աշխատատեղ. Մշակույթի պալատում 85 և ավելի***
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	*Նախորդ տարվա բյուջեն՝ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանաձոր համայնքը չի ունեցել 2022 թվականի հաստատված բյուջե և ղեկավարվելով ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 10-րդ մասով, որի համաձայն 2022 թվականի բյուջեն կատարվելու է նախորդ տարվա բյուջեի համամասնություններով /ծախսերը կատարվելու են նախորդ տարվա յուրաքանչյուր ամսում կատարված ծախսերից ոչ ավելի/ի, ապա որպես պլաններ ներառվել են համայնքի 2021 թվականի բյուջեով հաստատված մուտքերը և կատարված փաստացի ծախսերը.*

	Պլանը	***Փաստացին***	***Տոկոսը***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր */1+2-3/,որից*	4676057900	4521472600	96.7
1.Վարչական բյուջեի մուտքեր, որից՝	3667824900	3786540900	103.2
1.1 Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	440246300	440246300	100
1.2 Վարչական բյուջեի եկամուտներ	3227578600	3346294600	103.7
- Սեփական եկամուտներ	1158590700	1313012200	113.3
2.Ֆոնդային բյուջեի մուտքեր, որից	1075482500	737112900	68.5

2.1 Ֆոնդային բյուջեի փարեսկզբի ազատ մնացորդ	424802800	424802800	100
2.2 Ֆոնդային բյուջեի եկամուտներ	650679700	312310100	48
3. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ	67249500	2181200	3.2
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր /1+2-3/, որից	3574714300	3346675200	93.6
1.Վարչական բյուջեի ծախսեր	3128511300	2841571700	90.8
2.Ֆոնդային բյուջեի ծախսեր, որից	513452500	507284700	98.8
2.1 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	1073945700	561314600	52.3
2.2 Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-560493200	-54029900	9.6
3. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներ	67249500	2181200	3.2
Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը /Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/, որից՝	1073945700	561314600	52.3
- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	21803800	723980	33.2
- Տրանսպորտ	610663000	312038400	51.1
- Աղբահանում	5620400	3292000	58.6
- Կեղտաջրերի հեռացում	12930000	6771700	52.4
- Բնակարանային շինարարություն	7794200	300000	3.8
- Ջրամատակարարում	4607600	200000	4.3
- փողոցների լուսավորում	13579600	4757300	35
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	210112200	115941300	55.2
- Հանգիստ, մշակույթ և կրոն	120402900	98928900	82.2
- Կրթություն	66432000	11845200	17.8

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

5918315200 դրամ.

Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր /1+2/,որից	5918315200
1.Վարչական բյուջեի մուտքեր, որից՝	3520345200
- Սեփական եկամուտներ	1460428600
2.Ֆոնդային բյուջեի մուտքեր, որից	2397970000
2.1 Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	925000000

2.2 Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1472970000
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր */1+2/, որից*	5918315200
1.Վարչական բյուջեի ծախսեր	3520345200
2.Ֆոնդային բյուջեի ծախսեր, որից	2397970000
2.1 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	3710257000
2.2 Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-1312287000
Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը */Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր/, որից՝*	3710257000
- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	34000000
- Տրանսպորտ	1929699600
- Այլ բնագվառներ	12000000
- Աղբահանում	191548000
- Կեղտաջրերի հեռացում	27300000
- Բնակարանային շինարարություն	226624400
- Ջրամատակարարում	7000000
- փողոցների լուսավորում	194063000
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	135000000
- Հանգիստ, մշակույթ և կրոն	339783200
- Կրթություն	613238800

Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվա բյուջեն՝ 2 843 022 723 դրամ. Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարվա բյուջեն՝ ... դրամ. Ներկայացնել ծրագրի իրականացման և իրականացման տարվան հաջորդող տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտները և ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից նախատեսված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով

	Ծրագրի իրականացման տարի	Ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարի
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի /1+2/, այդ թվում՝	5918315200	5398730000
1.Վարչական բյուջեի մուտքեր, որից՝	3520345200	3700930000
- Սեփական եկամուտներ	1460428600	1556202000
2.Ֆոնդային բյուջեի մուտքեր, որից	2397970000	1697800000
2.1 Ֆոնդային բյուջեի փարեսկզբի ազատ մնացորդ	925000000	0
2.2 Ֆոնդային բյուջեի եկամուտներ	1472970000	1697800000
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի /1+2/, որից՝	5918315200	5398730000
1.Վարչական բյուջեի ծախսեր	3520345200	3700930000
2.Ֆոնդային բյուջեի ծախսեր, որից	2397970000	1697800000
2.1 Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	3710257000	2682800000
2.2 Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-1312287000	-985000000

Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝	3710257000	2682800000
- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	34000000	25000000
- Տրանսպորտ	1929699600	1535000000
- Այլ բնագվառներ	12000000	12000000
- Աղբահանում	191548000	185000000
- Կեղտաջրերի հեռացում	27300000	30000000
- Բնակարանային շինարարություն	226624400	14800000
- Ջրամատակարարում	7000000	12000000
- փողոցների լուսավորում	194063000	130000000
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	135000000	96000000
- Հանգիստ, մշակույթ և կրոն	339783200	110000000
- Կրթություն	613238800	545000000
Ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված ծախսերը, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝ */ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի համար համայնքի ֆոնդային բյուջեից նախատեսված գումարները՝ ըստ ոլորտների/*	1370052929	
-Տրանսպորտ	823974770	
-Աղբահանում	90860000	
-Բնակարանային շինարարություն	62749512	
-Փողոցների լուսավորում	81028350	
- Այլ մշակութային կազմակերպություններ	62131957	
- Հանգստի և սպորտի ծառայություններ	46279973	
-Նախադպրոցական հաստատություններ	143843083	
-Արտադպրոցական հաստատություններ	59185284	

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	*Համայնքի ընթացիկ տարվա կանխատեսվող ֆոնդային բյուջեի մուտքերի (ներառյալ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր) 3710257000 դրամ և ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով մուտքերի՝ 2050869200 դրամ հաշվին ծախսերում ներառվել են համայնքային ծրագրերն ըստ իրենց առաջնահերթությամբ և վերոնշյալ ծրագրի համար հնարավոր չէ գումար հատկացնել:* ***Ընթացիկ ծախսերը կազմել են՝ 3520345200 դրամ**, որից* *Աշխատանքի վարձատրություն- 462997000 դրամ* *Ծառայությունների ևապրանքների ձեռք բերում-900868000 դրամ* *Սուբսիդիաներ- 1791178300 դրամ* *Դրամաշնորհներ-106850000 դրամ* *Սոցիալական նպաստներ-52688900 դրամ* *Այլ ծախսեր-205763000 դրամ* ***Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 3710257000 դրամ**, որից* *Շենքերի և շինությունների շինարարություն-581929200 դրամ* *Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում-2872779800 դրամ* *Վարչական սարքավորումներ-20000000 դրամ* *Այլ մեքենաներ և սարքավորումներ-190548000դրամ* *Ոչ նյութական հիմնական միջոցներ-20000000 դրամ* *Նախագծահետազոտական ծախսեր-25000000 դրամ:*

Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, - ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ _____ դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	*274 300 000 ՀՀ դրամ /100 %/* *7 800 000* *780 000* *4 680 000* *1 040 000*
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	**150 865 000 ՀՀ դրամ (55 %),**
Այլ ներդրողներ	**..... դրամ (.... %),** *նշել ներդրողի անունը:*
Ծրագրի իրականացման տևողությունը	**Սկիզբը_հունիս_2024թ.** **Տևողությունը 7 ամիս**
Ծրագրի ծախսերը	*Շին աշխ. 260 մլն դրամ:*
Ամսաթիվ	*28 ապրիլ 2023թ.*

ԶԾ, ԱԿ և ՏՏ բաժնի պետ՝Լ.Դավթյան
Email: vanadzorcity@mail.ru
Հեռ. 044040133

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար **Ա.ՓԵԼԵՇՅԱՆ**
(անունը, ազգանունը)